Կենսագրություն

Գևորգ Բալաբեկի Դանիելյանս, ծնվել եմ 1958 թ. մայիսի 5-ին՝ Երևանում: 1965 թ. ընդունվել, իսկ 1975 թ. գերազանցությամբ ավարտել եմ Երևանի Կռիլովի անվան թիվ 17 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել եմ Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1977-79 թթ. ծառայել եմ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության տարածքում տեղակայված խորհրդային բանակի զինված ուժերում:

1983 թ. գերազանցության դիպլոմով ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, իսկ 1987 թ.՝ նախկին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Պետության և իրավունքի ինստիտուտի ստացիոնար ասպիրանտուրան, որտեղ և պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն՝ «Տեղական իշխանության մարմինների դերն օրինականության ամրապնդման ոլորտում» թեմայով, 1987 թ. նոյեմբերի 25-ին ինձ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004 թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Կառավարման ակադեմիայի մասնագիտական խորհրդում պաշտպանել եմ դոկտորական ատենախսություն, 2005 թ. փետրվարի 18-ին ինձ շնորհվել է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան. դոկտորական ատենախոսության թեման է՝ «Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»:

ԵՊՀ գիտխորհրդի 2004 թ. ապրիլի 22-ի որոշմամբ շնորհվել է դոցենտի գիտական կոչում, իսկ նույն գիտխորհրդի 2008 թ. մարտի 20-ի որոշմամբ՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Նախկին ԽՍՀՄ ԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց և թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո, գործուղվել եմ Երևան, աշխատանքի անցել իրավաբանական ֆակուլտետի Սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնում, որպես դասախոս:

2003-2010 թթ. եղել եմ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիային առընթեր գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, իսկ 2011 թ.՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող 001 և 002 մասնագիտական խորհուրդների անդամ:

1989 թվականից դասախոսական ու գիտաստեղծագործական գործունեությունը համատեղել եմ գործնական աշխատանքի հետ: Մասնավորապես, 1989 թ. մարտին աշխատանքի եմ անցել ՀՀ դատախազության համակարգում. 1989-92 թթ. զբաղեցրել եմ ՀՀ դատախազության Ազգամիջյան

հարաբերություններում օրենքների կատարման վրա հսկող բաժնի պետի, այնուհետև, մինչև 1996 թ.՝ Հրազդանի միջշրջանային դատախազի պաշտոնները, 1999-2004 թթ. եղել եմ ՀՀ գլխավոր դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչության պետը, իսկ 2004 թ. մարտի 31-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004թ. մարտի 31-ի թիվ ՆՀ-48-Ա հրամանագրով նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ: 2007 թ. մայիսի 30-ից եղել եմ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի նախագահը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի հունիսի 8-ի թիվ ՆՀ-146-Ա հրամանագրով նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար. այդ պաշտոնից ազատվել եմ Հանրապետության Նախագահի 2010 թ. դեկտեմբերի 9-ի թիվ ՆՀ-290-Ա հրամանգրով:

2011 թ. փետրվարի 4-ից՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի խորհրդականն եմ: 2013 թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել եմ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ՝ 0,5 դրույքով շարունակելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի խորհրդականի պաշտոնավարումը: Մինչ այս պահն աշխատում եմ, որպես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ:

2004 թ. հուլիսի 1-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով ինձ շնորհվել է արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան, իսկ 2006 թ. սեպտեմբերի 13-ին՝ «Հայաստանի Հանրապետության Վաստակավոր իրավաբանի» պատվավոր կոչում: Պարգևատրվել եմ մի շարք կառավարական մեդալներով, շնորհակալագրերով և անձնական զենքով:

1999-2002 թթ. նշանակվել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և միջազգային իրավունքի, իսկ 2002-2004 թթ. և 2010-2013 թթ.՝ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության մասնագիտացման գծով բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական պետական քննությունների հանձնաժողովի նախագահ: 2015 թվականից նշանակվել եմ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական իրավունքի մասնագիտացմամբ մագիստրատուրայի գծով ավարտական պետական քննությունների հանձնաժողովի նախագահ:

34 գիտական մենագրության և 72 գիտական հոդվածների, ուսումնական ծրագրերի և մասնագիտական թեմաներով շուրջ 300 հրապարակախոսական հոդվածների հեղինակ եմ, համահեղինակ եմ 20 գիտական աշխատության ու ուսումնական ձեռնարկի: Հրատարակված աշխատությունները, հիմնականում, առնչվում են վարչական իրավունքի ու վարչական արդարադատության, սահմանադրաիրավական և դատաիրավական, դատախազության

սահմանադրական կարգավիճակի, տնտեսական հանցագործությունների և Հայոց Եղեռնի հիմնախնդիրներին:

Վերապատրաստման ծրագրեր եմ անցել ԱՄՆ-ում՝ Վաշինգտոնի միջազգային իրավունքի ինստիտուտում, Հունգարիայում՝ հանրային կառավարման ակադեմիայում և այլն:

Ղեկավարել կամ մասնակցել եմ մի քանի տասնյակ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. սեպտեմբերի 4-ի հրամանագրի հիմքով նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ, այնուհետև՝ ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի անդամ:

2017 թ. հունիսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական Ներկայացուցչական Ժողովում ընտրվել եմ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

Բացի հայերենից, տիրապետում եմ ռուսերեն և ֆրանսերեն լեզուներին:

Ամուսնացած եմ, ունեմ երկու չափահաս երեխա:

Գևորգ Բալաբեկի Դանիելյան
22.02.2018 թ.